

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2017թ. գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

23 հունիսի 2017թ.

Ներկայեին՝ գիտխորհրդի 20 անդամներից 19–ը (ներկայաթերթիկը կցված է):
Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սադյան
Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի «Կենսաբժշկագիտության» ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի անցկացման հարցը:
2. «Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի» ամբիոնի դոցենտի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի անցկացման հարցը:
3. «Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի» ամբիոնի ասիստենտի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի անցկացման հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ և ՈՐՈՇԵՑԻՆ՝

Լսեցին՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի «Կենսաբժշկագիտության» ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի անցկացման հարցը:

Ելույթ ունեցան՝

Նիստի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սադյանը, մրցութային հանձնաժողովի նախագահ ք.գ.թ. Տ. Սարգսյանը և գիտքարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ «Կենսաբժշկագիտության» ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է բժշկական գիտությունների դոկտոր Ռուբեն Անդրանիկի Հովհաննեսյանը:

Մրցույթին մասնակցող թեկնածուի գիտական կոչումը, աշխատանքային ստաժը և գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում են հայցվող պաշտոնի համար ներկայացվող բոլոր պահանջներին:

Գիտքարտուղար Ա. Դադայանը նշեց, որ համաձայն ներկայացված փաստաթղթերի, Ռ.Ա. Հովհաննեսյանի թեկնածությունը քննարկվել է կենսաբժշկագիտության ամբիոնում, ինչպես նաև մրցութային հանձնաժողովում: Կենսաբժշկագիտության ամբիոնը և մրցութային հանձնաժողովը երաշխավորել են նրան՝ հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Ռ.Ա. Հովհաննեսյանը հեղինակ է 160 գիտական աշխատանքների, որից 4 գյուտարարական աշխատանքներ և 14 նորարարական առաջարկներ:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են հինգ թեկնածուական, 8 մագիստրոսական ատենախոսություններ և 5 դիպլոմային աշխատանքներ: Գիտական հետազոտությունների բնագավառն է՝ միկրոցիրկուլյացիայի և արյան ռեոլոգիայի հետազոտությունները անհետաձգելի ու շոկային վիճակների, երկարատև ճնշման համախտանիշի, արյան էքստրակորպորալ շրջանառության, ինսուլտների և գլխուղեղային վնասվածքների ժամանակ:

Հանդիսանում է «Ապացուցողական բժշկության մասնագետների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ:

«Դասախոսը՝ ուսանողի աչքերով» վերջին երկու տարում սոց. հարցման միջին միավորը կազմում է 4.73:

Առաջարկվեց Ռ.Ա. Հովհաննեսյանի թեկնածությունը ներառել քվեաթերթում՝ կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի փակ գաղտնի քվեարկության անցկացման համար:

Բաց քվեարկությամբ գիտական խորհուրդը (միաձայն) որոշեց մրցույթի մասնակից Ռ.Ա. Հովհաննեսյանին երաշխավորել կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար և նրա անունը մտցնել փակ գաղտնի քվեարկության քվեաթերթի մեջ:

Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար որոշվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ՝ Ա. Ֆ. Մկրտչյան

անդամներ՝ Մ.Ա. Շեյրանյան

Ս. Ժ. Բաղդասարյան:

Ընտրություններից հետո Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի անդամները (20-անդամներից ներկա էին 19-ը) լսեցին հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունն, ըստ որի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել են խորհրդի 19 անդամներ: Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու համար Ռ.Ա. Հովհաննեսյանին կողմ են քվեարկել գիտխորհրդի 19 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթ՝ 0:

Որոշեցին՝ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և Ռ.Ա. Հովհաննեսյանին համարել ընտրված կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. «Ֆարմաբիմիայի և ֆարմակագնոզիայի» ամբիոնի դոցենտի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի անցկացման հարցը:

Ելույթ ունեցան՝

Նիստի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյանը, մրցութային հանձնաժողովի նախագահ ք.գ.թ. Տ. Սարգսյանը և գիտքարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ «Ֆարմաբիմիայի և ֆարմակագնոզիայի»

ամբիոնի դոցենտի թափուր տեղի համար դիմել է քիմ. գիտ. թեկնածու, դոցենտ Ժաննա Վլադիմիրի Սարգսյանը: Մրցույթին մասնակցող թեկնածուի գիտական կոչումը, աշխատանքային ստաժը և գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում են հայցվող պաշտոնի համար ներկայացվող պահանջներին: Ժ. Վ. Սարգսյանի թեկնածությունը քննարկվել է Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնում և մրցութային հանձնաժողովում: Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնը և մրցութային հանձնաժողովը երաշխավորել են նրան հայտարարված մրցույթին մասնակցելու համար: Գիտքարտուղար Ա. Դադայանը նշեց, որ Ժ. Վ. Սարգսյանը հեղինակ է 43 գիտական հոդվածի, 2 արտոնագրի, 11 զեկուցման թեզիսի:

Նա ղեկավարում է կուրսային, դիպլոմային և մագիստրոսական աշխատանքներ, վերջին երկու տարում սոց. հարցման միջին միավորը կազմում է 4.37:

Առաջարկվեց Ժ.Վ. Սարգսյանի թեկնածությունը ներառել քվեաթերթում՝ ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի դոցենտի թափուր թափուր տեղի համար հայտարարված մրցույթի փակ գաղտնի քվեարկություն անցկացման համար:

Բաց քվեարկությամբ գիտական խորհուրդը (միաձայն) որոշեց մրցույթի մասնակից Ժ. Վ. Սարգսյան երաշխավորել անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի դոցենտի պաշտոնում ընտրվելու համար և նրա անունը մտցնել փակ գաղտնի քվեարկության քվեաթերթի մեջ:

Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար որոշվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ՝ Ա. Ֆ. Մկրտչյան
անդամներ՝ Մ.Ա. Շեյրանյան
Ս. Ժ. Բաղդասարյան:

Ընտրություններից հետո Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի անդամները (20-անդամներից ներկա էին 19-ը) լսեցին հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունն, ըստ որի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել են խորհրդի 19 անդամներ: Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի դոցենտի պաշտոնը զբաղեցնելու համար Ժ.Վ. Սարգսյանին կողմ են քվեարկել գիտխորհրդի 18 անդամ, դեմ՝ 1, անվավեր քվեաթերթ՝ 0:

Որոշեցին՝ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և Ժ.Վ. Սարգսյանին համարել ընտրված Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի դոցենտի պաշտոնում:

3. «Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի» ամբիոնի ասիստենտի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի անցկացման հարցը:

Ելույթ ունեցան՝

Նիստի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյանը, մրցութային հանձնաժողովի նախագահ ք.գ.թ. Տ. Սարգսյանը, գիտքարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ «Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի» ամբիոնի ասիստենտի թափուր տեղի համար դիմել է քիմ. գիտ. թեկնածու Սաթենիկ Ղուկասի Պետրոսյանը:

Մրցույթին մասնակցող թեկնածուի գիտական կոչումը, աշխատանքային ստաժը և գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում են հայցվող պաշտոնի համար ներկայացվող պահանջներին: Նրա թեկնածությունը քննարկվել է ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնում նաև մրցութային հանձնաժողովում: Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնը և մրցութային հանձնաժողովը երաշխավորել են նրան հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Ա. Պետրոսյանը հեղինակ է 19 գիտական հոդվածի, 21 զեկուցման թեզիսի: Նա հանդիսանում է Ֆարմացիայի ինստիտուտի մեթոդական խորհրդի նախագահը, բարձր մակարդակով վարում է «Թունաբանական քիմիա» և «Բժշկական էնզիմոլոգիա» դասընթացները, ղեկավարում է կուրսային, դիպլոմային և մագիստրոսական աշխատանքներ: Վերջին երկու տարում սոց. հարցման միջին միավորը կազմում է 4.89:

Առաջարկվեց Ա. Պետրոսյանի թեկնածությունը ներառել քվեաթերթում ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի փակ գաղտնի քվեարկություն անցկացման համար:

Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար որոշվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ՝ Ա. Ֆ. Մկրտչյան

անդամներ՝ Մ.Ա. Շեյրանյան

Ս. Ժ. Բաղդասարյան:

Ընտրություններից հետո Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի անդամները (20-անդամներից ներկա էին 19-ը) լսեցին հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունն, ըստ որի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել են խորհրդի 19 անդամներ: Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտի պաշտոնը զբաղեցնելու համար Ս.Ղ. Պետրոսյանին կողմ են քվեարկել գիտխորհրդի 19 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթ՝ 0:

Որոշեցին՝ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և Ս.Ղ. Պետրոսյանին համարել ընտրված Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտի պաշտոնում:

4. Ընթացիկ հարցեր:

Նիստի ընթացքում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան